«Մանկական անհետաձգելի բուժօգնություն»

2023 թվականից կրկնողաբար Երևան քաղաքում «Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոն»-ի կողմից կանցկացվի «Մանկական անհետաձգելի բուժօգնություն» թեմայով ուսումնավարժական դասընթացի ծրագիրը՝ համաձայն հավելվածի: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Թիրախային լսարանը՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգներ, սրտաբաններ, նյարդաբաններ, շտապ և անհետաձգելի բժշկության բժիշկներ և բուժքույրեր, մանկաբույժներ, մանկական բուժքույրեր, բուժքույր-անեսթեզիստներ, ինտենսիվ բուժքույրեր, սրտաբանության և նյարդաբանության բուժքույրեր: Մասնակիցներին կշնորհել ՇՄԶ 7 տեսական և 14 գործնական կրեդիտ: Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարել 093177717 հեռախոսահամարով:

ԾՐԱԳԻՐ

«ՄԱՆԿԱԿԱՆ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2023 թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոն», Տիտրոգրադյան փ. 14,, «Էրեբունի» բժշկական կենտրոն)

«Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոն»

Օր 1		
09:00-11:00	**Դասախոսություն** Երեխաների զննում՝ կյանքի համար վտանգավոր իրավիճակները բացահայտելու նպատակով. նախնական զննում, առաջնային զննում, երկրորդային զննում, ախտորոշիչ միջամտություններ	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
11:00-13:00	**Դասախոսություն** Անհետաձգելի իրավիճակում արդյունավետ թիմային աշխատանքի կազմակերպում: Երեխաների սրտի կանգի ճանաչում: Մանկական սրտի կանգի ալգորիթմ	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
13:00-14:00	Ընդմիջում	
14:00-17:00	**Գործնական աշխատանք** /ՄԱԲՕ/ սրտի կանգի ժամանակ: Սրտի կանգի ռիթմերի ճանաչումը: Սրտի կանգի կառավարումը:	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա

	Սիրտ-թոքային վերակենդանացման /ՍԹՎ/ որակի մշտադիտարկումը։ Մանկական դեֆիբրիլացիա։ ՍԹՎ ժամանակ կիրառվող հիմնական դեղամիջոցների դեղաբանությունը։ Դեղորայքի ներմուծման ներերակային, ներոսկրային, ներբրոնխային ճանապարհները։ ՍԹՎ վնասվածքի, ջրահեղձման, անաֆիլաքսիայի, թունավորումների և այլ դեպքերում	
Օր 2		
09:00-10:00	**Դասախոսություն** Երեխաների շնչառական դիսթրեսի և շնչառական անբավարարության ճանաչումը։ Շնչառական խանգարումների տեսակները, ծանրության աստիճանները	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
10:00-13:00	**Գործնական աշխատանք** Երեխաների շնչառական աղմուկների տարբերակումները առուսկուլտացիայի միջոցով։ Շնչառության կանգի կառավարումը։ Վերին շնչուղիների, ստորին շնչուղիների անցանելիության խանգարումների կառավարումը։ Թոքային հյուսվածքի ախտահարմամբ շնչառական խանգարումների, շնչառության կենտրոնական կարգավորման խանգարումների կառավարումը։ Շնչուղիների անցանելիության ապահովման միջոցները։ Օրոֆարինգեալ և նազոֆարինգեալ օդատարների տեղադրում։ Շնչուղիների պարունակության արտածծում։ Լարինգեալ դիմակի, iGel-ի տեղադրում, շնչափողի ինտուբացիա։ Արհեստական շնչառության մատակարարման եղանակներ։ Շնչառության օժանդակում պարկ-դիմակով։ Ընդլայնված շնչուղիներով արհեստական շնչառություն։ Վնասվածքով հիվանդների վարման առանձնահատկությունները։ Լրացուցիչ թթվածնի մատակարարման եղանակներ։ Նեբուլայզերների տեսակները, կիրառման հմտությունները։ Շնչառության արդյունավետության գնահատման չափանիշները և գործիքակազմը	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
13:00-14:00	Ընդմիջում	
14:00-15:00	**Դասախոսություն** Շոկ.պաթոֆիզիոլոգիան, ծանրության աստիճանները /կոմպենսացված, հիպոտենզիվ/, տեսակները	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
15:00-17:00	**Գործնական աշխատանք** Շոկի ընդհանուր կառավարման սկզբունքները։ Շոկի մասնավոր տեսակների /հիպովոլեմիկ, կարդիոգեն, անաֆիլակտիկ, նեյրոգեն, սեպտիկ, օբստրուկտիվ/ կառավարում։ Գնահատում։ Դեղորայքային թերապիա։ Հեղուկի ներմուծում /հեղուկի ընտրություն, ծավալի հաշվարկ, pull-push մեթոդի կիրառում/։ Ներոսկրային կաթետերների տեղադրման տեխնիկա /հավի ոսկրերի վրա աշխատանք/։	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա

	Գույներով կոդավորված ժապավենի կիրառում տարբեր հասակի երեխաների համար	
Օր 3		
09:00-10:00	**Դասախոսություն** Երեխաների առիթմիաների ճանաչումը	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
10:00-13:00	**Գործնական աշխատանք** Հազվասրտության /անոթազարկով, առանց անոթազարկի/ կառավարումը։ Դեղորայքը։ Սրտախթանիչի կիրառումը։ Հաճախասրտության / անոթազարկով, առանց անոթազարկի/ կառավարումը։ Ոչ դեղորայքային միջոցառումները։ Դեղորայքը։ Սինքրոնիզացված կարդիովերսիա	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա
13:00-14:00	Ընդմիջում	
14:00-17:00	**Գործնական աշխատանք** Հետվերակենդանացման շրջանի բուժօգնություն։ Ախտորոշիչ միջամտություններ։ Ստուգաթերթերի կիրառում։ Կարևոր կենսական ֆունկցիաների մշտադիտարկում և կառավարում։ Հետմահու խնամք	Հասմիկ Քոչարյան/ Անուշավան Վիրաբյան/ Արաքս Մանուկյան/ Դիանա Անջելովա

Թիրախային լսարան՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգներ, սրտաբաններ, նյարդաբաններ, շտապ և անհետաձգելի բժշկության բժիշկներ և բուժքույրեր, մանկաբույժներ, մանկական բուժքույրեր, բուժքույր-անեսթեզիստներ, ինտենսիվ բուժքույրեր, սրտաբանության և նյարդաբանության բուժքույրեր։

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 12-24 հոգի